

796

2-24

ԱՅ ԱՐՄԵՆԱԿՐԹԱԿԱՆ
ՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ



5



ՀԱՅ

ԱՐՄԵՆԱԿՐԹԱԿԱՆ

ՆԱՅԱԿՐԹԱԿԱՆ-ԺՐԱԿՐԹ



Կ. ՊՈՒՐՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1919

796
Ն-24

25 OCT 2019

3-24

ՀԱՅ ՄԱՐՄԵՆԱԿՐԹԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ



Handwritten signature

370
1973-ՇՐ



ՏԵՅ

ՄՐԱՌԻԳ-ՄԱՍԻՐՈՒ

ՅԵՅՄԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ



75780

Handwritten purple text

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
1919

13786

06. 2013

9006

2010

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ

Օ. ԱՐԶՈՒՄԱՆ

№ 273

Հայ Մայրե՛ր

Վսահուրեամբ մեզ յանձնեցէ՛ք Ձեր գա-
ւակները , զանոց պիտի վերադարձնենք ձեզի
աւելի ազնիւ , աւելի հզօր , արի եւ գորովոս :




ՍԲԱՌՈՒԴԻՆ ԵՐԴՈՒՄԸ

ՊԱՏՈՒՈՅՍ ՎՐԱՅ Կ'ԵՐԴՆՈՒՄ'

— Ըլլալ հաւատարիմ Աստուծոյս եւ ծառայել Հայրենիքիս :

— Մի՛շտ օգնել ուրիշին եւ գործել իբր պարտականութեանը զիտակից արի եւ վեհանձն մարդ :

— Հնազանդիլ Հայ՝ Սքառուղի դաւանանքին :



1922-83



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ԱՐՔՈՒԴԻՆ ԴԵԻՆՆԱՐԸ



1. Սքառւղին խօսքը նուիրական է :
2. Սքառւղը հնազանդ է :
3. Սքառւղը հաւատարիմ եւ ուղղամիտ է :
4. Սքառւղը միշտ կ'օգնէ ուրիշներուն :
5. Սքառւղը բարեկամ է ամէնուն եւ եղբայր ամէն ուրիշ Սքառւղի , առանց ընկերական կարգի խտրութեան :
6. Սքառւղը բարեկիրթ է :
7. Սքառւղը մաքուր հայերէն կը խօսի ամէն ատեն եւ ամէն տեղ :
8. Սքառւղը սնասունները կը պաշտպանէ եւ կը սիրէ :
9. Սքառւղը միշտ զուարթ եւ խանդավառ է :
10. Սքառւղը աշխատասէր եւ կորովի է :
11. Սքառւղը տնտեսող է :
12. Սքառւղը մաքուր է մտածումով , խօսքով եւ գործքով :





Հայ՝Սքառ'ւդ

Արարատի մէջ տե՛ս , Գողթան երգիչներու ազգային «Ազատ Մասիս»ը յեցած իր ամուր խարսխին՝ սլացիկ միշտ վե՛ր , Հայ աշխարհի սահմանին վրայ , ասպետօրէն անձնուրաց ու բարի , իր սպիտակափառ մաքուր գագաթը բարձրացնելով ու հրամայելով՝

մի՛շտ «ԲԱՐՁՐԱՑՈՒՐ» :

Դո՛ւն ալ , Հայ՝ Սքառուդ , Մասիսին պէս կրթնէ քու բարոյական ամուր սկզբունքներուդ խարսխին , ու այդ պատուանդանէն վե՛ր բարձրացիր : Հոգիդ անոր անբիծ գագաթէն թող ներշնչուի ու անոր նմանի : Մասիսի դէպի վեր սլացիկ բարձրացումը թող ներշնչէ քեզ նպատակին ուղղակի ձգտելու գաղափարը , ու , ինչպէս այսօր , վե՛հ բարձունքը մինչեւ քեզի խոնարհելով՝ կը ներշնչէ ազատութեան , մաքրութեան , բարութեան , քաջութեան , վեհանձնութեան գաղափարը ու կը բարձրացնէ քեզ , դո՛ւն ալ , քու կարգիդ ուրիշները

«ԲԱՐՁՐԱՑՈՒՐ» :





Հ Ա Յ Մ Բ Ա Ո Ւ Դ Ն Ե Ր Ո Ւ

ՅԱՅՄԱԿԻՐ - ԾՐԱԿԻՐ

Ա. Ե Պ Ա Տ Ա Կ

1. ՀԱՅ ՄԱՐՄՈՒԴՆԵՐՈՒ ձեռնարկին նպատակն է պզտիկ հայորդիներուն Ֆիզիքական, իմացական եւ բարոյական կարողութիւնները զարգացնել, հոգեբանական պահանջներու համաձայն՝ եւ ներդաշնակօրէն :
Մքառուղական հրահանգները կը յարդարեն տղուն մարմինը եւ նկարագիրը, եւ զայն կը պատրաստեն կասարեղու իր բոլոր պատրասականութիւնները :

Բ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

- 2.** Ա. ՄԱՐՄՈՒԴՆԵՐՈՒ ՇԱՐՔԵՐԸ, զոր կը կազմեն.
1. Մխուղներ .
 2. Մխուղական խմբակներ .
 3. Մխուղական խումբեր :

Բ. ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ, զոր կը կազմեն.

1. Տեղական խորհուրդներ .
2. Կեդրոնական Վարչութիւն :

Գ. ՍՔԱՌԻԿՆԵՐՈՒ ՇԱՐՔԵՐ

3. ՍՔԱՌԻԿ. — Այս անունը կուտանք մեր շարքերու պատանիներուն :

Անգլիական բանակին մէջ Սֆաուդը ըսելով կը հասկցուի մասնաւորապէս այն խելացի եւ յանդուգն զինուորը որ խուզարկութիւններ կ'ընէ եւ իր առաջնորդած բանակին աջն է :

Սքաուդը բառը այն մասնաւոր առումով զոր մենք կը գործածենք, կը նշանակէ ընկերական ամէն խաւերէ յառաջ եկած այն ընտրեալ մարդիկը որոնք իրենց նկարագրին ազնուութեամբք եւ ուժովը, իրենց դատողութեամբ, իրենց վճռականութեամբ, եւ իրենց գործնական ոգիով պիտի ըլլան Հայաստանի աննկուն դէտերը եւ լուսամիտ, քաջ ու կորովի առաջնորդները. անոր քաղաքակրթութեան, առեւտրական, նարտարագիտական, ծովային ու ռազմական գործունէութեան նշմարիտ Ռահվիրաները:

4. ՍՔՐՈՒԿԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ. — Սքաուդները իրենց ցոյց տուած յարմարութեանց համեմատ կը դասակարգուին այսպէս.

1. Նորնծայ սֆաուդներ.
2. Երկրորդ կարգի սֆաուդներ.
3. Առաջին կարգի սֆաուդներ.

4. Վկայեայ սֆաուդներ.

5. Արարատեան սֆաուդներ: (*)

5. ՄՈՒՏՔԻ ՊԱՅՄԱՆ — Ամէն պատանի որ կ'ուզէ սքաուդներու շարքերուն մաս կազմել, պարտաւոր է.

Ա. Նուագագոյն սասներկու, առաւելագոյն քսան տարեկան ըլլալ.

Բ. Ծնողիին կամ պաշտպանին գրաւոր հաւանութիւնը բերել.

Գ. Իր գտնուած շրջանի մասնաձիղիին դիմել եւ արձանագրուիլ:

Դ. ՓՈՐՉԵՐ ԵՒ ԻՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

6. ՆՈՐԱՆԾԱՅ ՍՔՐՈՒԿԻ ԸՆԴՈՒՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ. —

Ամէն նորագիր՝ սքաուդի խումբի մը՝ նախքան թեկնածու ներկայանալը (եւ նորընծայի երդումը ըստ արարողութեան ընելը եւ ընդունուելը) պէտք է՝

1. Գիտնայ եւ բացատրէ

- Ա. Սֆաուդի դաւանանքը .
- Բ. Սֆաուդի հետախուզական նշանները եւ հակագոյցները.
- Գ. Սֆաուդի բարեւը:

(*) Ծովային Սֆաուդներ. — Կայ նաեւ սքաուդներու առանձին շարք մը Ծովային-Սքաուդներ անունին տակ. կը կազմուի մասնաւոր ղեկութիւն ընծայող ծովեզերեայ շրջաններու մէջ, Կ'ունենան կատարեալ փորձառական ծանօթութիւններ եզերապահի, նուագի, քաջ լուղորդի եւ այլն. Նոյն աստիճաններով կը դասաւորուին ինչպէս ցամաքային Սքաուդները, եւ սակայն ինքնայատուկ մարզանքներ ունենալով՝ մանրամասնութիւնները պիտի հրատարակուին առանձին.

2. Գիտնայ պարգել Ազգային դրօշակը եւ բացառել անոր ծագումը :

Նորագիրը նուազագոյն երկու ամիս պէտք է հրահանգուի սքառուդ պետի մը կողմէ, որ երաշխաւորելով անոր բարոյական եւ ֆիզիքական կարողութիւնները ներկայացնէ զայն քննութեան :

Նորագիրը այս քննութիւնները անցնելու առիթով, ոչ միայն պարտական է հաստատել Սքառուդի Դաւանանքին իր կատարեալ ծանօթութիւնը, այլ ի հարկին պէտք է ճշդել կարենայ այս դաւանանքին իւրաքանչիւր հատուածին նշանակութիւնը եւ արժէքը . պէտք է որոշապէս վճռէ պատշաճիլ այդ դաւանանքին եւ զիտնալ, որոշ չափով մը, արժէքը այն յանձնառութիւններուն որոնց կ'ենթարկուի իր հանդիսաւոր երդումէն վերջ :

Քննութիւնը յաջողապէս անցնել եւ երդումը ընելէն անմիջապէս վերջ՝ կ'ընդունի զինքը նորընծայ սխառուդ նուիրագործող նշանակը : (*)

Յ. ԵՐԿՐՈՐԴԻ ԿԱՐԳԻ ՍՔԱՌՈՒԴ ԸՆԴՈՒՆՈՒՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ. — Երկրորդ կարգի սքառուդ ըլլալու համար նորընծան պէտք է յաջողութեամբ անցնէ հետեւեալ փորձերը .

1. Թերեւ միտաւորի մը նախնական դարմանը սանիդ եւ վերջը կապել .

2. Գոհացուցիչ կերպով նկարագրել ֆենիչիկ կողմէ յոյց տրուած ազարակի մը բակին կամ վաճառատան մը

(*) Այս առիթով իր ինֆլուքեան տեսին մէջ տեղի ունենալիք արձանագրութեան հաւելուածին մասին տեսնել Յօդ. 34.

ցուցադրելիս պարունակութիւնը եւ կամ որոշ տեղոյ մը մեջ քանակը յորս աննկան առարկաներէն առնուազն չսանը վեցը քուել՝ միայն մեկ վայրկեան դիտելի վերջ :

3. Տասնը հինգ վայրկեանէն երկու ֆիդուէքը ճանաչող կրէ՛լ Սխառուդի գնացումը . (*)

4. Հեթ ճանչնալ եւ անոր հետեւիլ .

5. Բաց օղիկ մեջ արագ կրակ վառել .

6. Տեսակ մը կերակուր եփել միայն կանոնական ամանը գործածելով .

7. Կողմնացոյց գործածելու. արեւէն կամ հիւսիսային աստղէն առաջնորդուելու վարժութիւն ունենալ .

8. Առնուազն երկու ամիս իբր նորընծայ խոււրթի մը մեջ հրահանգուած ըլլալ :

Տ. ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՍՔԱՌՈՒԴ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ. — Երկրորդ կարգի սքառուդ առաջին կարգի սքառուդ կ'ըլլայ, երբ կրնայ յաջողութեամբ անցնել հետեւեալ փորձերը .

1. 50 մէքր շողալ (բժշկական արտօնութեամբ). եթէ առողջապահական պատճառով՝ ինչպէս նաեւ իր բնական տեղին աշխարհագրական դիրքը չի ներելու պարագային արգելուի այդ առիթէն՝ փոխարէն պէտք է զիտնայ հետեւեալներէն մէկը .

Ա. Բժշկական անմիջական օգնութեան ծանօթութիւններ .

Բ. Հետախուրդութիւն (հետք գտնել ճանչնալ եւ անոնցմէ օգտուիլ) .

(*) Այս մասին բացատրութիւնը տեսնել ծրագրիս յաւելուածական՝ ընդհանուր ծանօթութիւններու բաժնին մէջ :

Գ. Դիպսածիզ ըրրայ (լաւ նշանաւու) .

Դ. Հրշեհի վարժութեանց տեղեակ ըրրայ :

2. Երկու սիլուսքր տեղ կտեղ սասը վայրկեանեն .

3. Դրօշակով խօսիլ կաւ «Մօրս»ի այբուբենին գործածութիւնը գիտնայ .

4. Սպայակոյցի քար եւ մը կարդայ եւ գիտնայ անկեց առաջնորդուիլ .

5. Դիսաւոր Հանաստեղութիւնները ճանչնայ .

6. Երեք ժամեն ռոսով քաներհինգ սիլուսքր, կաւ չորս ժամեն հեծեղակնով քանասուն սիլուսքր կտեղ եւ կաւ սասը սիլուսքր թիւվարեղ եւ ճշգրիտ կերպով նկարագրեղ իւրաքանչիւրին ուղղեցիծը :

7. Ճշգրիտ եւ մանրամասն կերպով նկարագրեղ՝ գիւղի մը դիրքը եւ աշխարհագրական հանգանակները .

8. Հեռաւորութիւն մը, մակերեւոյթ մը, սարածութիւն մը, բարձրութիւն մը, ծանրութիւն մը կաւ խումբի մը քանակը՝ առ առաւելն քաներհինգ առ հարիւր սխաւով մը միացն գնահատեղ :

9. Ճանչնայ առ նուազն սասը տեսակ սովորական ծառեր կաւ բոյսեր, եւ ցոյց տայ անոնց քանակնական նկարագրիւները :

10. Գիտնայ կացիւնով ծառ մը սապալեղ՝ գործնական որոշ եղանակին համեմատ :

11. Հրդեհի մը պահուն եւ կաւ ծովին մարդ մը ազատեղ, խրջած ձի մը անվնաս դարձնելու միջոցները գործարեղ, շրջուն առողջապահական պաշտօնեայի մը անհրաժեշտ ծանօթութիւնները ունենայ, գիտնայ անմիջական դարմանները անկի ջուրեն հանուած զգայագիրկի մը :

12. Իր կողմէ միացն շինուած՝ պարզ ձեռնական աշխատութիւն մը ներկայացնեղ .

13. Նորագիր մը ներկայացնեղ իբր նորընծայ Սփառչի թիվնածու՝ որուն ստրվացուցած ըրրայ պահանջուածները, իր խնամքներով :

9. ՎԿԱՅՅԵԱԼ ՍՔԱՌԻԻ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ. — Վկայեալ սքառուղ ըլլալու համար՝

1. Պեք է ըրրայ առաջին կարգի սփառչ .

2. Ունենայ առ նուազն վեց մասնագիտական վիպական (*), որոնցմէ մեկին ստողջապահական շրջուն պաշտօնեայի եւ երկրորդին հետախուզողի ըրրայ անհրաժեշտ պայման է :

10. ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍՔԱՌԻԻ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՄԱՐ. —

Արարատեան սքառուղի մը արժանիքին բարձրանալու համար .


1. Կրացնեղ վիպեայ Սփառչի մը պայմանները .

2. Տասներկու վիպականներով գնահատուած ըրրայ .

3. Առնուազն երկու սարի ծառայած ըրրայ սփառչական շարքերու մեջ .

4. Նշանաւոր հանդիսանայ սփառչական բացառիկ քանակութիւնով մը :

(* Սքառուղներու մէջ արուեստի, գիտութեան կամ արհեստագիտական կարողութիւններին (օրերեւութեան-աստեղագէտ, հետախուզող, առողջապահական շրջուն պաշտօնեայ, նաւագ, բուսաբան-քննապատում, ծիւղարիկ, երգիչ, հիւան, խոհարար, հեծեյան օրդ, առաջնորդող, թարգման, մեքենագէտ, լուսանկարիչ, հրշէջ, կռիվակար, զրօշախօս-հեռագրիչ, դիպածիզ եւ այլն) քանակապէս նշանակուած քննիչներու ներկայութեան ապացուցանողներու կը յանձնուին վկայականներ .



1922-83

11. ԳՆՆԻՉ ՄԱՐՄԻՆ. — Սքառուղական զանազան աստիճաններ եւ մասնագիտական վկայականներ ստանալու համար՝ փորձերը եւ քննութիւնները կը վարէ խմբապետը, տեղական խորհուրդի ներկայութեան՝ որ ի հարկին կը հրաւիրէ նաեւ գիտական եւ արհեստագիտական ճիւղերու մասնագետներ: Այս վերջիններուն Միութեանս անդամակցելը անհրաժեշտ պայման չէ:

Ե. ՍՔԱՌԱՂԱԿԱՆ ԽՈՒՄԱՆԵՐ

12. ՍՔԱՌՈՒԴԱԿԱՆ ԽՈՒՄԱՆ. — Սքառուղական խմբակ մը կը բաղկանայ առ առաւելն ինը սքառուղներէ: Գնացքներու, բանակումներու (campement) մարզանքներու եւ խաղերու ատեն խմբակը կ'առաջնորդուի զինքը կազմող սքառուղներէն արժանաւորագոյնին ուղղակի հրամանին ներքեւ որ առաջնորդ(*) կը կոչուի, եւ կը կարգուի խմբապետին կողմէ:

Առաջնորդն ալ իր կարգին կ'ընտրէ օգնական մը, որ դեր-առաջնորդ անունը կ'առնէ:

13. ԽՈՒՄԱՆ ԲԱՆԱԿԱՆ ՍՔԱՌՈՒԴՆԵՐՈՒ ԹՈՒԱՔԱՆՆԵՐՈՒՄ. — Խմբակի մը Սքառուղներէն իւրաքանչիւրը կ'ունենայ կարգաթիւ մը, որուն թիւ մէկը կը վերապահուի առաջնորդին:

14. ՆԻՉԱԿԱՆԻՐՕՇԸ (FANION). — Ամէն խմբակ ունի իրեն յատուկ նիզակաղբօշը, եռանկիւնածեւ, ճերմակ եւ կանոնական ծաւալով, (**) վրան կը կրէ իր

(*) Առաջնորդ տե՛ս յօդ. 18.

(**) 30 սանթիմետր լայնք և 45՝ երկայնք.

խմբակը զատորոշող անասունին գլխուն կամ ամբողջին պատկերը, իր պատկանած խումբին վզկապին գոյնովը կերպասէ:

Իւրաքանչիւր խմբակի Սքառուղներ, արշաւներու միջոցին, որպէսզի առանց իրար տեսնելու կարենան զիրար ճանչնալ, պիտի ձայնեն այն անասունին ձայնովը որուն անունը առած են: Սքառուղը պատկանած խմբակին անասունի ձայնը յաջողապէս նմանցնելու համար պէտք է յաճախ վարժութիւններ ընէ:

Զ. ՍՔԱՌԱՂԱԿԱՆ ԽՈՒՄԱՆԵՐ

15. ՍՔԱՌՈՒԴԱԿԱՆ ԽՈՒՄԱՆ. — Սքառուղական խումբ մը կը բաղկանայ մեկ կամ աւելի խմբակներէ: Ամէն խումբի կը հրամայէ, տղոց հանդէպ գորովութեամբ, անբասիւր նկարագրով կրթիչ մը, որ կը կոչուի խմբապետ*:

Խմբապետը կ'ընտրէ օգնական մը որ ի հարկին իրեն կը փոխանորդէ եւ կը կոչուի դեր-խմբապետ:

16. ԽՈՒՄԱՆ ԻՐՕՇԸ. — Սքառուղներու ընդհանուր դրօշն է Ազգային դրօշը: Սակայն խումբերը իրարմէ կ'որոշուին, իրենց խումբին յատուկ գոյնով նւ կանոնական չափով շինուած խմբադրօշով՝ որ կը կրէ միութեան նշանակը եւ աջ կողմը պատկանած շրջանին թիւը Լատինական թուանշանով:

Խմբադրօշին գոյնը կ'ունենան նաեւ խումբին բոլոր սքառուղներուն վզկապերը:

17. ՍՔԱՌՈՒԴԻ ԲԱՆԱԿԱՆ ՍՔԱՌՈՒԴՆԵՐՈՒՄ. — Սքառուղ մը չի կրնար խմբակէ մը ուրիշ խմբակ, կամ խումբէ մը ուրիշ խումբ անցնիլ առանց խմբապետին արտօնու-

(*) Խմբապետ տե՛ս յօդ. 19.

Թեան, այս վերջինը ինքն ալ կը դիմէ տեղական խորհուրդին հաւանութեան:

18. ԱՌԱՅՆՈՐԿ. — Խմբապետն է որ հոգ կը տանի խմբակի ոգին մշակելու ամէն մէկ սքառուղի մէջ: Խմբակի համերաշխութիւնը, միութիւնը սքառուղին երկրորդ եւր պէտք է կազմէ: Իր եռանդովը, ուշիմութեամբը, նկարագրովը, խմբապետին ուշադրութիւնը զբաւող սքառուղը առաջնորդ կը կարգուի:

Առաջնորդներ իրենց համար պատուոյ կէտ մը պէտք է համարեն, սքառուղի դաւանանքը իրենց ընկերներուն յարգել տալը, եւ այդ սկզբունքին իրենց անձովն իսկ պէտք է իբր օրինակ ծառայեն:

19. ԽՄԲԱՊԵՏ. — Դերը եւ անձնական պայմաններ: Խմբապետն է որ ամէն մէկ խմբակի մէջէն կ'որոշէ առաջնորդը, զոր կ'ընտրէ խմբակին մէջ սքառուղին ցոյց տուած յատկութիւններէն թիւադրուելով: Խմբապետը իր խումբին զանազան խմբակներուն հսկելով հանդերձ՝ պէտք է աշխատի նաեւ առաջնորդին նախաձեռնութեան եւ իշխանութեան մեծ բաժին ձգելու:

Առաջնորդներն են որ կ'օգնեն խմբապետին աշխատութիւններուն: Խմբապետը իր կողմէ կ'ընտրէ նաեւ իր օգնականը, դեր-խմբապետը, որուն դերն է ապահովել անոր աշխատութեան տեւականութիւնը խմբապետին զբաղուած կամ բացակայ ըլլալու պարագային:

Դեր-խմբապետը կ'ընտրուի ընդհանրապէս առաջնորդներուն երիցագոյններէն եւ կամ մէջերնուն ամէնէն շատ արժանիք ցոյց տուողներէն:

Խմբապետի պայմաններն են ունենալ.

Ա. Գոհացուցիչ հմտութիւն սխառուներու տրուելիք ընդհանուր գիտելիքներու մասին եւ քաջ ծանօթութիւն սխառուներու դասակարգման:

Բ. Կատարեալ ըմբռնում եւ խոր համոզում սխառուներու կազմակերպութեան ազգային եւ քառայական այն բարձր արժեքին որ ուսուցումին հիմը կը կազմէ:

Գ. Անձնական սցւայիսի դիրք եւ նկարագիր որ քառայական ազդեցութիւն ներգործե քոյց վրայ, ինչպէս նաեւ իր պաշտօնը յարատեւութեամբ եւ կորույթիօրէն կիրարկելու համար անյոյրոյդ եւ յանառ կամ:

Դ. Կարողութիւն սխառայական խմբաւորումներու համար հաւաքաւարի մը բարձր վարչութիւնը ապահովելու:

Ե. Եռամեսայ փորձառական պաշտօնավարութիւն խումբ մը վարելու սեպ:

Զ. Տարիքով առնուազն քսան տարեկան ըլլալ:

Այս հանգամանքներն անհրաժեշտ են նաեւ դեր-խմբապետներուն, բացի տարիքէն որ քսանը ուրէն կրնայ սկսիլ եւ Դ-դ. հանգամանքին որ իրենց անհրաժեշտ չէ:

20. ԽՄԲԱՊԵՏԻ ԱՆՈՒԱՆՈՒՄԻՆ ԵՂԱՆԱԿԸ. — Խմբապետերու անուանումին համար կը ներկայանան երկու պարագայներ՝

Ա. Երբ արդէն տեղւոյ մը մէջ կազմուած է սքառուղական խմբակներ, հետեւաբար կան տեղական խորհուրդ եւ մէկ կամ աւելի խմբապետեր:

Բ. Երբ տեղւոյ մը մէջ առաջին անգամն է որ կը ձեռնարկուի սքառուղական շարքերու կազմութեան:

Առաջին պարագային՝ տեղւոյն խմբապետը առաջնորդներու մէջէն, վերեւ յիշուած պայմանները լրացնող եւ իրեն յանձնուած պատանիներուն յարգանքին ու համակրանքին արժանացող, կազմակերպող կարողութիւնով յատկանշուող երիտասարդը իբր խմբապետի թիկնածու կը ներկայացնէ տեղական խորհուրդին, որ իր կարգին երբ համոզում գոյացնէ, կը տեղեկագրէ Կեդրոնի վարչութեան, սպասելով անկէ թիկնածուին դիրքը վաւերացնող պաշտօնաթուղթը: Այս վկայականը պէտք եղած տեղւոյն եւ պարագային մէջ խմբապետի հանգամանքով սքառուկներու կրթութեամբ զբաղելու իրաւունքը կուտայ իրեն:

Երկրորդ՝ երբ տեղւոյ մը մէջ սքառուկներու շարքեր դեռ գոյութիւն չունին. կեդրոնը իր կողմէ կը նշանակէ խմբապետը, զայն ուղղակի կոչելով իր պաշտօնին: Այս եղանակով պաշտօնի կոչուած խմբապետի մը համար անհրաժեշտ պայման չէ առաջնորդ եղած ըլլալը: Իր գործն է մանաւանդ մղում տալ շարժումին, եւ ջանալ ստեղծել առաջնորդները եւ այլն, օգտուելով տեղական մասնագէտներուն բոլոր լաւ տրամադրութիւններէն:

Այն պարագային որ տեղական խորհուրդները խմբապետի մը իր վարկին անարժան կամ պաշտօնին անկարող մէկ վիճակը դիտեն, իրաւասու են նկատառումին յանձնելու Կեդրոնական Վարչութեան որ հարկ տեսած պարագային կրնայ անհրաժեշտը տնօրինել: Կեդրոնի Վարչութիւնը իրաւասու է իր ուղղակի քննութիւններուն հետեւանքով եւս որոշումներ տալ դիտողութեանց տեղի տուող խմբապետներու մասին:

Ձ1. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԵՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.— Կեդրոնական Վարչութիւնը կը գտնուի առժամապէս Պոլսոյ մէջ եւ իբր պարտականութիւն կ'ստանձնէ խմբաւորումներուն ամբողջութեան տալ այն Վարչական միութիւնը որ անհրաժեշտ է կազմակերպութեան բարւոք գործակցութեան եւ ձեռնարկին կատարեալ յաջողութեան համար: Այս նպատակաւ կ'աշխատի կազմակերպել տեղական խորհուրդները, կը քաջալերէ զանոնք եւ կ'օգնէ անոնց սքառուկական մշակոյթին: Շարունակ խորհրդակցութեան մէջ կը մնայ անոնց հետ թղթակցութիւններու, հրատարակութիւններու միջոցաւ, ինչպէս նաեւ սքառուկներու խումբերը քննելու պաշտօն ունեցող պատգամաւորներ ղրկելով:

Ամէնուն ճիգերէն եւ թելադրութիւններէն օգտուելու տրամադիր կեդրոնական Վարչութիւնը, կ'ուսումնասիրէ ամէնքը շահագրգռող ընդհանուր խնդիրները: Կը ջանայ որ նոր խումբերը օգտուին հիներուն ստացած փորձառութենէն եւ ընդհանուր առումով կ'աշխատի սքառուկներու կրթական մէթոտներուն բարելաւումին ինչպէս նաեւ ընկերակցութեան բարգաւաճումին: Վերջապէս բանախօսութիւններ կազմակերպելով Կեդրոնի կամ գաւառներու մէջ, երկեր, ծանօթագրութիւններ եւ այլզան հրատարակութիւններ ընելով՝ կ'աշխատի շարժումը տարածելու եւ միշտ աւելցնելու հայ սքառուկներու թիւը:

Արդ՝ Կեդրոնական Վարչութիւնը ըլլալով վերին

հսկողը սքառղական ընդհանուր շարժումին, ինքն է միակ իրաւասուն զբաղելու Տեղական խորհուրդներու կազմութիւնով, խմբապետներու վաւերացումով կամ անուանումով, եւ ի հարկին հրաժարեցումով, սխառդներու ասիականի բարձրացման վաւերացումով, ինչպէս նաեւ արժանաւորներուն շխնչանկերու բաշխումով եւ այլն :

Կեդրոնի Վարչութիւնը ներկայացնելով միեւնոյն ատեն Հ. Մ. Ը. Միութեան նոյն գործը ստանձնող մարմինը իր կազմին եւ նիւթական միջոցներուն մասին տեսնել Հ. Մ. Ը. Միութեան Ծրագիր-Կանոնագրին մասնաւոր բաժինը :

Ը. ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՆԵՐ

22. ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՆԵՐՈՒ ԴԵՒԸ. — Տեղական խորհուրդին նպատակն է կազմակերպել Սքառղներու խումբերը, եւ անոնց գործունէութիւնը ապահովել :

Տեղական խորհուրդները կատարեալ նախածեռնութիւն ունին իրենց գործունէութեան մասին, բայց կեդրոնին միացած կը մնան իրենց ոգիով :

23. ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ. — Տեղական խորհուրդը կրնայ կազմուել Ս. Կեդրոնական Վարչութեան նախածեռնութեամբ յարմար նկատուած շրջանակի մը մէջ: Բ. Այն տեղոյն մէջ ուր տակաւին ուրիշ սքառղներ չկան: Այն ատեն ձեռնարկողին առաջին հոգը պէտք է ըլլայ համոզումներու եւ նկարագրի նոյնութիւն ունեցող ընկերներ իրեն շահիլ, կազմելու համար խմբակ մը, նոյն ատեն իրենցմէ աւելի մեծերուն մէջ փնտուել սիրուած եւ յարգուած

անձ մը որ իրենք առաջնորդէ կամ գոնէ իր պաշտպանութիւնը ընծայէ նախածեռնարկ ըլլալով Տեղական խորհուրդին կազմութեան եւ Կեդրոնական Վարչութեան տեղեկագրէ արդիւնքը՝ վաւերացուելու համար: Տեղական խորհուրդը այն ատեն միայն վաւերական հանգամանք կ'ստանայ երբ տեղոյն մէջ, Սքառղներու, գոնէ խումբ մը կազմելու համար, բաւականաչափ թուով գործօն անդամներ կ'ունենայ: Յորչափ խումբ մը չէ կազմուած, խորհուրդը «Առժամեայ Տեղական խորհուրդ» անունը կ'առնէ:

Տեղական խորհուրդը կը գտնէ այն անձը կամ անձերը որոնք ձեռնհաս են խմբապետներ հասցնելու: Տեղական խորհուրդը Մամուլին միջոցաւ կը հրաւիրէ այն երիտասարդները որոնք կը փափաքին խմբապետի դասընթացքին հետեւիլ: Պէտք է որ այս դասընթացքը գործնական եւ կտրձ ըլլայ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մասնաճիւղերու վարչութիւնը նոյն ատեն Սքառղներու, Տեղական խորհուրդներու դերը ստանձնած ըլլալով, կազմին մանրամասնութեանը մասին դիմել Հ. Մ. Ը. Միութեան Ծրագիր-Կանոնագրին որոշ հատուածին:

24. ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ. Տեղական խորհուրդը կազմուածին պէս յարաբերութեան կը մրտնէ Կեդրոնի Վարչութեան հետ, իր հիմնարկութեան նիստին տեղեկագիրը կը դրկէ, ինչպէս նաեւ կը տեղեկացնէ իր Հասցէն, ընդհանուր անդամներու անունները եւ հանգամանքը:

25. ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԱԿԱԼ ԱՆ-
ԴԱՄՆԵՐ.—Տեղական խորհուրդը այս պատուանունը
կուտայ այն անձերուն որոնց բարոյական կամ նիւ-
թական օժանդակութիւնը օգտակար կը դատէ թէ իր
եւ թէ ընդհանուր ընկերակցութեան շահերուն :

26. ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՆԻԻԹԱԿԱՆ ՄԻ-
ՋՈՑՆԵՐԸ ԵՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.— Տեղական խոր-
հուրդը ամենալայն ինքնավարութիւն ունի, պէտք է
ինք իր միջոցներով հայթայթէ իր պէտքերը. եւ ամեն
ազատութիւն ունի կազմակերպութեան ոգիին համա-
ծայն պայմաններով ստեղծելու իր հասոյթները :

2. Մ. Բ. Միութեան մասնահիւղի վարչութիւն-
ները նոյն ատեն լրացնելով սքառուկներու տեղական
խորհուրդներու դերը, հաւասարապէս կը տրամադրեն
իրենց հասոյթները սքառուկներու կազմակերպութեան
պէտքերուն համար ալ :

Նուիրատուին կողմէ մասնաւոր տրամադրութիւ-
նով մը՝ գուտ սքառուկներու կազմին համար տրամադ-
րուած նուէրները, ինչպէս նաեւ սքառուկներուն ուղ-
ղակի ձեռարուեստներու վաճառումէն զոյացած հա-
սոյթները բացառութիւն կը կազմեն՝ միայն սքառու-
կներու պէտքերուն յատկացուելով :

Տեղական խորհուրդները կրնան իրենց նիւթա-
կան միջոցները գործածել ամբողջութեամբ եւ ազա-
տօրէն, պայմանաւ որ անոնք չի սահմանուին կազ-
մակերպութեան ոգիին եւ շահուն հակառակ գործա-
ծութեան մը :

27. ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ ՅԱՐԱՐԱԳՆԻԹԻՒՆ-

ՆԵՐԸ.—Տեղական խորհուրդը կեդրոնական վարչու-
թեան կը ղրկէ ամէն ամսոյ առաջին եօթնեակին մէջ,
նախորդ ամսոյ մէջ իր ունեցած հաւաքոյթներուն տե-
ղեկագիրը, նիւթական դրոշմները պարզօրէն հաշուեցոյցը,
ինչպէս նաեւ հակիրճ տեղեկատուութիւն մը տեղական
խմբակներու գործերու մասին: Կեդրոնական վարչու-
թեան ուշադրութեան կը յանձնէ այն ամէն իրողու-
թիւնները որոնք կազմակերպութիւնը շահագրգռելու
բնոյթը ունին, անոր կը յանձնէ այն խնդիրները զորս
բուսումնասիրել օգտակար կը համարի, եւ յարատեւ
կապով մը կը ջանայ աշխատակցի/ի սքառուկներու ա-
մէն խումբերու միութեան զարգացման եւ ներդաշնակ
կրթութեան :

Տեղական խորհուրդին նամակները, տեղեկատուու-
թիւնները, տեղեկագրերը եւ զանազան նամակներու
գրութիւնները, ըլլան անոնք ղրկուած կեդրոնական
վարչութեան կամ իր թղթակիցներուն, պէտք է գրը-
ուած ըլլան կեդրոնին կողմէ ցոյց տրուած տիպարին
համաձայն թուղթի վրայ: Այս թուղթերը պէտք է
կրնն ընկերակցութեան ամբողջ շիջողը նշանակներով
միասին, եւ նոյն ատեն մասնաձիւղը որոշող ծանօթու-
թիւնները :

Թ. ՆՇԱՆԱԿ ԵՒ ՆՇԱՆԱԲԱՆ

28. ՆՇԱՆԱԿ ԵՒ ՆՇԱՆԱԲԱՆ.—Նշանակը կը կը-
րեն սքառուկները եւ անոնց պետերը իրենց գլխարկին
վրայ: Նշանակը մետաղէ է եւ կը ներկայացնէ «Արա-
րասեան Մասիս»ը «արարացի», բարձրացու» նշանա-

բանով: Անոր մէջ հայ սքառուղը պիտի տեսնէ իր մտա-
տիպարը որ կը ձգտի արիօրէն բարձրանալ դէպի իր
ազնիւ խոտայր, եւ պիտի ջանայ վեռական կամքով,
անկեղծ նկարագրով, ուղղամիտ նուիրումով հոն բարձ-
րացնել այն ընկերութիւնը որուն ինք կը պատկանի:

29. ՆՇԱՆԱԿԻ ՅԱՉՆՈՒՄ. — Նշանակը կեդրոնա-
կան վարչութեան խնամքովը պատրաստել կը տրուի,
եւ տեղական խորհուրդներուն միջոցաւ եւ խմբապետ-
ներուն ձեռքով կը յանձնուի նորընծայ սքառուղին,
երբ այս վերջինը իր յնուարները յաջողապէս անցուցած
եւ նոյննր ըրած է:

30. ԵՐԿՐՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ. — Նշանակը ըն-
դունելու եւ նորընծայի շարքը անցնելու համար նո-
րագիրը կ'ընէ օրինական երդումը: Տեղական խորհուր-
դը, գործակցաբար խմբապետին, ջանք պէտք է ընէ այս
արարողութեան հանդիսաւորութիւն մը տալու, որպէս-
զի պատանիները լաւ թափանցեն իրենց պատուի
յանձնառութեան արժէքին եւ անոր կարեւորութեան:
Այս առիթով մասնաւոր գումարում մը կ'ունենայ,
իւր պատուակալ եւ համակիր անդամներէն կը հրաւի-
րէ նաեւ անոնք որոնց ներկայութիւնը կրնայ շուք
մը տալ այս արարողութեան:

Ժ. ՀԱՄԱԶԳԵՍ

31. ՀԱՄԱԶԳԵՍՏը հետեւեալներէն կը բաղկանայ
1. Գլխարկը Թագիքէ, խաքի գոյնով, տափակ ե-
զերքով, կ'լակի կապով, եւ ժապաւենի տեղ կաշի ե-
րիզով մը:

2. Շապիկը. — Խաքի կերպասէ, ուսնոցներով, կուրծ-
քին աջ եւ ձախ կողմերուն վրայ մէկ մէկ գրպանով:

3. Տախասը. — Արշաւի յատուկ ձեւով, կարճ, շի-
տակ, ծունկէն վեր եւ թոյլ, մութ գոյն կերպասէ
պատրաստուած:

4. Գուշպան. — Երկար եւ բուրդէ որոշ գոյնով մը:

5. Վիզի թաշկինակը. — Իւրաքանչիւր խումբի իր
մասնաւոր գոյնով:

6. Կօշիկը. — Երկար, նախընտրելով բնական գոյնով
մորթը:

7. Կաշիկ գօտին. — Կեդրոնը հայ սքառուղի յատուկ
մետաղ նշանակով աջ եւ ձախ կողմերու օղակներէն
անցած երկու կեռեր՝ ջրաման, դանակ, կացին կամ
ուրիշ յարմար առարկաներ կախելու համար:

8. Ուսի երիզը. — Վզի թաշկինակին գոյնով,
տասնըհինգ սանդիմ երկայն զոյգ մը երիզ ձգուած
ձախ ուսն ի վար:

9. Գաւազանը. — Հարիւր վաթսուն սանթիմետր
երկայնութեամբ եւ երեք սանթիմետր տրամագծով ամ-
բողջ երկայնքին ութի բաժանուած՝ իւրաքանչիւրը
բսան սանդիմեղրով, վերի գագաթէն հինգ սանթիմետր
վար ծակով մը. եւ վերէն հաշուելով երկրորդ բաժինը
աստիճանաւորուած տեսիմետրով. կէս տեսիմետրով
եւ սանթիմետրով:

10. Պայուսակը. — Կտաւէ, Ալպեան պայուսակի
ձեւով:

Խմբակ մը կազմուելուն պէս տեղական խորհուրդը
պէտք է իր կարելին ընէ, որպէսզի կազմակերպութեան
կողմէ ընդունուած համազգեստը սքառուղներու հայ-
թայթէ:

Կեդրոնը հարկ տեսած պարագային հազուստները կրնայ մասնակի փոփոխութեան ենթարկել :

Հիմնական պայման է, որքան կարելի է, հազուստի միութիւնը ապահովել . ինչ որ մտածման եւ գործունէութեան միութեան արտաքին նշանն է :

32. ՍՔԱՍՈՒԻԻ ԲԱՐԵՒՐ. — Սքաուզի մը բարեւը կը խորհրդանշէ սքաուզի երդումը : Սքաուզը կը բարեւէ աջ ձեռքին ափը դէպի դուրս դարձած, մէջտեղի երեք մատները բարձր վեր, որոնց առջեւ կը ծալլէ, ըթամատին ծայրը ճկոյթիին վրայ ծածկելով : Բարձրացած երեք մատները կը յիշեցնեն սքաուզի երդումին երեք հատուածները : Սքաուզը իր ընկերներուն կը բարեւէ վերեւ բացատրուած դիրքով՝ ձեռքը ուսիև ուղղութեանը բարձրացնելով եւ նոյն ձեւով կը փոխադարձուի : Սքաուզը երբ իր պետեան կամսպայի մը պիտի բարեւէ, ձեռքը նոյն դիրքին մէջ կը բարձրացնէ մինչեւ ճակատ, որուն այս վերջինները կը պատասխանեն նոյն ձեւով կամ ազատ բարեւով :

33. ՀԱՒԱՔԱՏՆՂԻ ԵՒ ԺՈՂՈՎԱՏՆՂԻ. — Խմբապետները կ'աշխատին որ իրենց նորավարժ ընկերները տողորուն սքաուզներու դաւանանքովը եւ երդումի շարոյական սկզբունքներովը : Անոնց տեսական կրթութիւն մը տայլէ աւելի պէտք է փորձառական, դէմ յանդիմանական մէթոտով, պարզ ընտանեկան եւ մտերմական խօսակցութեանց ձեւով, անոնց հոգւոյն խորը դրոշմն աւանդուած սկզբունքները եւ գիտելիքը : Ասոր համար պէտք է որ իրենց դեռատի ընկերները կանոնաւորապէս հաւաքուին շաբաթը գոնէ մէկ

կամ երկու անգամ, որոշ տեղի մը մէջ : Տեղական խորհուրդները, թէ՛ սքաուզներու եւ թէ՛ Հ. Մ. Ը. Միութեան ընդհանուր ծրագրին գործադրութեան համար ջանադիր պէտք է ըլլան, հաստատ հաւաքատեղի մը ունենալու, որուն զարդարումին համար իւրաքանչիւր անգամ կը տրամադրէ իր մասնաւոր յատկութիւնները, նոյկ իսկ շինելով գեղջուկ կահ կարասին :

Հաւաքումի այս կայանը ի սկզբան կրնայ ըլլալ տեղւոյն ազգային իշխանութենէն փոխ տրուած վարժարանի սրահ մը : Մտաւոր եւ բարոյական զարգացման հիման վրայ գործող թաղային Միութեան մը շէնքը, կամ շատ համեստ յարկ մը զոր գործին համակիր սեփականատէրը կը տրամադրէ մինչեւ որ մնայուն պատշաճ շէնք մը տրամադրուի վեհանձն պատուակալ անդամի մը կողմանէ եւ կամ վարձուի տեղական մասնաւոր պիւտեճով : Ահա այս պայմաններուն համապատասխանող կայանն է որ կը կոչուի հաւաքատեղի :

Հաւաքատեղիին մէջ արգելուած է վիճաբանիլ ֆաղափական եւ կրօնական ամէն հարցերու շուրջ, ան միմիայն սքաուզական ու մարմնակրթական դասախօսութեանց յատկացուած պիտի ըլլայ :

Տեղական խորհուրդը կրնայ իր կեդրոնին եւ իր նիստերուն համար ուրիշ տեղ մը ընտրել իր յարմարութիւնները նկատի առնելով, օրինակի համար իր նախազահին բնակարանը եւ այլն . այս տեղը կը կոչուի Ժողովատեղի :

34. ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍ. — Ո եւ է պատանի որ փափաքող է մաս կազմելու Հայ Սքաուզներու՝ անդամակցած կ'ըլլայ նաեւ Հ. Մ. Ը. Միութեան :

Հ. Մ. Ը. Միութեան անդամակցելու համար թեկնածուն պարտի լեցնել մասնաճիւղին վարչութեան կողմէ իրեն տրամադրուած «առաջարկ անդամակցութեան» մակագրութեամբ տպագիր թուղթին մանրամասնութիւնները : Երբ պարունակութիւնը կը լրացնէ փափաքուած պայմանները, Տեղական Խորհուրդը անհրաժեշտ մանրամասնութիւնները կ'օրինակէ իր մասնաւոր տոմարին մէջ եւ բնագիրը կնքելէ վերջ կը դրկէ Կեդրոնի Վարչութեան :

Կեդրոնական Վարչութիւնը իր քով կը պահէ սոյն առաջարկի թուղթը եւ ի փոխարէն իր խնամքովը պատրաստուած, նախագահին, կամ անոր բացակայութեան, դեր-նախագահին կողմէ ստորագրուած եւ Կեդրոնի կնիքովը վաւերացուած մասնաւոր տոմար կը դրկէ Տեղական Խորհուրդին : Անոր մէջ նշանակելով՝ ըստ Կեդրոնի տոմարին այդ անձին տրուած կարգաթիւը՝ որով նորեկը ասկէ վերջ պիտի ճանչցուի Հ. Մ. Ը. Միութեան անդամներուն ընդհանուր շարքին մէջ : Տեղական Խորհուրդի նախագահն ալ իր կարգին նոյն տոմսին մասնաւոր բաժնին մէջ կ'ստորագրէ եւ նոր անդամին լուսանկարը տոմսին ծախ կողմի վերի անկիւնը փակցնելէ վերջ, մասնաճիւղի կնիքովը կը վաւերացնէ լուսանկարին ինքնութիւնը, ահա այս պայմանները լրացնելով ենթակային յանձնուած մասնաւոր տոմսն է որ կ'աւնէ ինֆուրքեան տուանուներ :

Վերոյիշեալ ձեւակերպութիւնները լրացուցած անդամի մը՝ երբ սքառուկներու կարգին մէջ ընդունուիլը յարմար կը տեսնուի եւ կ'որոշուի իր պատկանելիք

խումբը, խմբակը եւ կարգաթիւը, այդ մանրամասնութիւններն ալ կ'աւելցուին իր ինքնութեան տոմսին մասնաւոր բաժնին մէջ եւ կը ստորագրուի շրջանի սքառուկ պետին կողմէ, ու այսպէսով կը լրացնէ սքառուկի մը ինքնութեան տոմսին ամբողջական արժէքը : Այս պարագան կ'արձանագրուի, նոյն օրուան թուականով, մասնաճիւղի անդամներու Արձանագրութեան Տունարին՝ այդ անձին յատկացուած էջին ծանօթութեանց բաժնին մէջ, եւ անմիջապէս կը տեղեկագրուի Կեդրոնի Վարչութեան :

ՍՍ 35. ՀՐԱՅՈՒՄՆԵՅՈՒՄ. — Սքառուկ մը երբ կը դաւաճանէ իր դաւանանքին եւ այդ պարագան կը հաստատուի իր խմբապետին եւ տեղական Խորհուրդին կողմէ, իր երդումէն ազատ կ'արձակուի :


ՎԵՐՋ ՅԱՅՏԱԳԻՐ-ԾՐԱԳՐԻ

ԾԱՆՕԹ. — Սքառուկներու բացառիկ առաքինութեան կամ քաջութեան գործերը, ինչպէս նաեւ սքառուկական կազմակերպութեան կամ սքառուկի մը հանդէպ ուրեւ անհասի մը կողմանէ անձնուիրութիւն մը, օգտակար ծառայութիւն մը գնահատելու առիթով՝ տրուելիք պատուանիքներու եւ երախտանիքի մասին պիտի խօսուի ուրիշ առիթով :

ԽՄԲԱՊԵՏԵՐԸ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՇՐՈՒՄՆԵՐ

ԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ



Խմբագետը պիտի մասնակցի իր սքաուդներու աշխատութեան, ան իր խումբին միանգամայն պէտք եւ քարեկանը պիտի ըլլայ: Ինքն ալ պարտաւոր է հպատակել Սքաուդի դաւանանքին: Իր խումբին առաջին սքաուդն է ինքը, եւ այս շատ կարեւոր է: Ինքզինքը իր սքաուդներու տեղը պիտի դնէ հասկնալու համար անոնց կրած դժուարութիւնները, անոնց զգացած խանդավառութիւնները, ուրախութիւնները ու վիշտերը: Դիւրաթեք պարտի ըլլալ բնաւորութեամբ՝ եւ համբերատար:

Պէտք է որ խմբագետը իր եռանդէն տարուի եւ ընդունի բոլոր այն տղաքը որոնք սքաուդ ըլլալ կ'ուզեն, ընդհակառակը պէտք է որ նախ սակաւաթիւ տղաքներով սկսի: Պէտք է որ առաջին սքաուդները հատընտիր սքաուդներ ըլլան, կարեւոր պայման մըն է աս՝ որմէ կախում ունի մեծապէս ձեռնարկին յաջողութիւնը:

Խմբագետը տետրակ մը պարտի ունենալ, մասնաւորապէս սքաուդներուն համար, որուն մէջ իւրաքանչիւր անուան դիմաց՝ իր դիտածները կ'արձանագրէ:

Սքաուդական պտոյտները առնուազն խմբակի մը ամբողջութեամբ եւ խմբագետին հաւանութեամբ միայն տեղի կրնան ունենալ:

Սքաուդ մը խմբական պտոյտներէն դուրս իր համազգեստը պատահական կերպով չի կրնար կրել այլ միայն իր պետին հաւանութեամբ:

Խմբագետը միայն նորընծայի աստիճանը եւ զայն յատկանշող նշանակը կրնայ տալ թեկնածուին: Երկրորդ կարգի, Առաջին կարգի, եւ ատոր յաջորդող սքաուդական աստիճանի բարձրացումները՝ խմբագետներուն միջոցաւ կ'առաջարկուին տեղական խորհուրդներուն՝ որոնք՝ յետ օրինական քննութեան, վաւերացման համար կը տեղեկագրեն զանոնք Կեդրոնի վարչութեան:

Խմբագետը իր նոր խմբակին առջեւ է. իր քովն են թեկնածու սքաուդը՝ նորընծայ նուիրագործող նշանակները. որոնք պիտի բաշխուին: Այս առաջին շփումը պէտք է ազդէ նոր սքաուդին ապագային վրայ: Պէտք է որ տղան սկիզբէն իսկ զգայ թէ շուրջ բան մըն Պէտք է որ տղան սկիզբէն իսկ զգայ թէ շուրջ բան մըն է եղածը. կարգապահութիւն պէտք է, եւ կարգապահուէ թիւնը պէտք է որ պահանջուի խստիւ՝ բայց հանդարտօրէն, առաջին վայրկեանէն իսկ: Խմբագետը նորէն կը բացատրէ իր սքաուդներուն՝ երդումը, յետոյ իւր բացառիչ տղայ երդումի կը հրաւիրէ եւ կը բարեւէ: Այս արարողութիւնը հանդիսաւոր նկարագիր մը պարտի ունենալ: Յետոյ նորընծան յատկանշող նիւթերը կը յանձնուին թեկնածու սքաուդներուն:

Խմբակները իննէ աւելի տղոցմով չեն կրնար կազ-

մուսած ըլլալ : Անգամ մը որ խմբակ մը կազմուի , կարելի եղածին չափ քիչ փոփոխութեան ենթակայ պէտք է ըլլայ : Սքառուղը իր տեղը կ'ունենայ շարքին մէջ եւ այդ տեղը իրը կ'ըլլայ մինչեւ վերջը : Խմբապետը խմբակի ոգին պիտի զարգացնէ սքառուղներուն մէջ՝ սքառուղէն աւելի խմբակին ուղղելով իր դիտողութիւնները կամ իր շնորհաւորութիւնները : Խմբակը պէտք է ըլլայ համերաշխ եւ միացած , խմբակին մէջէն իր նկարագրի բարձրութեամբը , իր ուշիմութեամբը եւ իր եռանդովը ուշադրութիւն գրաւող սքառուղը Առաջնորդ կը կարգուի : Եթէ այդ տեսակ յատկութիւններ անմիջապէս չդիտուին սքառուղներուն մէջ՝ պէտք է սպասել քիչ մը եւ յետեւիլ իրենց գործունէութեան : Խմբապետը իր փոխանորդներուն ձեռներէցութեան ոգին պէտք է գրգռէ հասկցնելով թէ իրենց կը վստահի :

Խմբապետը պէտք է պահանջէ որ իւրաքանչիւր սքառուղ գրամ խնայէ՝ ուրկէ դիւրութեամբ վճարէ այն ծախքը որ եղած է իր համազգեստին համար :

Խմբապետը իր սքառուղներուն մասնակցութեամբ պիտի աստիճանաւորէ գաւազանները : Իւրաքանչիւր գաւազան իր տիրոջը անուան սկզբնատառերը պիտի կրէ :

Խմբապետին հրամանները զինուորական գոյն պէտք չէ որ ունենան : Կարճ հրաման մը, գաւազանին միջոցաւ կատարուած պարզ նշան մը կը բաւեն :

Խմբապետը նախ եւ առաջ քայելու մէկ քանի հրահանգներ ընել պիտի տայ հաւաքման վայրին մօտ : Հոգ պիտի տանի որ սքառուղներու յարմար դիրքին մէջ

պահեն իրենց մարմինը : Ոստումի ու արշաւի զանազան հրահանգներ ընել պիտի տայ , պիտի կրթէ զանոնք որպէսզի ըլլան չարխաշ , յանդուզն եւ պատրաստ աւեկն բանի : Պիտի սորվեցնէ գործածել գաւազանը փոսէ մը ցատկելու , ծառէ մը պատէ մը եւ այլն վեր մագլցելու համար : Ամենէն մեծերը եւ ուժովները միշտ պատրաստ պիտի ըլլան պզտիկներուն օգնելու :

Խմբապետը մեծ կարեւորութիւն պիտի տայ խաղերուն , որոնք պատուական միջոց մըն են նկարագրելու երեւան բերելու համար : Պիտի սորվեցնէ խարդախութիւն չընել խաղի մէջ եւ կորսնցուցած , յաղթուած ըլլալը խոստովանիլ ուղղութեամբ :

Վերջապէս խմբապետը կարգ մը խաղերէ դուրս պէտք է վարժեցնէ նաեւ իր սքառուղները ինչ ինչ հրահանգներու ինչպէս .

Գաւազաններու , ծածկոցներու , կտաւի կամ ճիւղերու միջոցաւ ապաւէն մը շինել ափյափոյ :

Կրակետոյ մը շինել՝ բաց օդի մէջ կերակուր եփելու համար : Զանազան դրութիւնները ուսումնասիրել (քարով , գաւազանով , հով եղած ատեն , անձրեւ եղած ատեն , եւ այլն) :

Գորգ կամ մահին հիւսել՝ առասաններու , գաւազաններու . յարդի կամ պտերի միջոցաւ :

Զանազան հանգոյցներ շինել չուանի միջոցաւ , պէտքին համեմատ :

Հագուստները եւ ուրիշ առարկաները ծրարել :

Սքառուղներ՝ հեռաւորութիւններէ իրարու հետ հաղորդակցելու համար դրօշախօսութեան մասնաւոր

վարժութիւն պէտք է ունենան: Դրօշախօս սքառուղին համար անհրաժեշտ է գոյգ մը դրօշակ որ պէտք է լրացնէ հետեւեալ պայմանները: Դրօշակին կերպասին ծաւալը պէտք է ըլլայ կէս մէթր քառակուսի, հեռուէն դիւրաւ տեսանելի վառ կարմիր գոյնով: Դրօշակին մէկ եզերքին վրայ կերպասը իր վրայ կրկնուած ըլլալով, պէտք է ներկայացնէ մէկ ծայրը գոց պարկ մը, վարի բաց բերնին մօտ գոյգ մը առասանով:

Այս պարկը պէտք է ունենայ ճիշտ լայնքը իր մէջ կարենալ պարունակելու դրօշակի փայտը՝ որուն պարկին մէջ մտնելիք վերի ծայրը պէտք է ունենայ մէկուկէս սանթիմէթր տրամագիծ, եւ վարի ծայրը երկու սանթիմէթր: Ընդհանուր երկայնութիւնն ըլլալով 90 սանթիմէթր, զագաթէն դէպի 55րդ սանթիմէթրին վրայ ունենայ թեթեւօրէն փոսացած օղակ մը: Այս պայմանները լրացնող փայտը իր բարակ ծայրէն՝ դրօշախօսը կը տեղաւորէ դրօշակին եզերքի պարկին մէջ եւ պարկին բաց բերնին մօտ գտնուած գոյգ մը առասանովը՝ լաթը լաւ մը կը պրկէ եւ կը կապէ 55րդ սանթիմէթրին վրայ գտնուող օղակին: Ահա այսպէսով պատրաստ կ'ունենայ փափաքուած դրօշակը: Գիտե՞ա՞ք եւ թիւերու մանրամասն ձեւերը տեսնել պսակերի մասնաւոր շաւեղաձիւն մէջ: Խմբապետն է որ պիտի բացատրէ իր սքառուղներուն, դրօշախօսութեան համար անհրաժեշտ ծանօթութիւններ եւ յաճախ գործածական բառ կամ խօսքերու կրճատումները ըստ իր ստացած հրահանգներուն:

Հանգոյցներու եւ հետախուզումի մասնաւոր

նշաններու շարք մը կայ, որոնց ծանօթութիւնը անհրաժեշտ է ամէն սքառուղի համար (Տես յօդ. 6): Խըմբապետներուն եւ առաջնորդներուն պարտականութիւնն է զանոնք սորվեցնել նորագիրներուն: Իրենց այդ աշխատութիւնը կը դիւրացնէ պսակերի մասնաւոր շաւեղաձիւնը՝ որ կրնայ զիրենք առաջնորդել:

ՀԱՆԴՈՅՑՆԵՐ

1. Անուորդ կապ (Nœud de cabestan). — Ընդհանրապէս նաւագներ կը գործածեն զայն. պարանը անուորդին (cabestan) վրայ անցնել եւ անուորդին շարժումի մէջ դրուելովը նաւը դէպի հաստատ կայան մը մօտեցընելու համար: Սքառուղներ այս կապը կը գործածեն երբ պարանի մը ծայրը անփոփոխ ծաւալով օղակ մը ձեւացնելու պէտքը զգան օղակի մը կամ կեռի մը անցընելու համար:

2. Օղակ կապ (Nœud droit). — Երկու հաւասար հաստութեամբ պարաններ իրարու հետ հաստատապէս կապելու համար՝ սովորաբար ժողովուրդին կողմէ կոյր կապ կոչուած հանգոյցը:

3. Չուրիակ կապ. — (Nœud de tisserand). — Երկու անհաւասար հաստութեամբ պարաններ իրարու կապելու առիթով կը գործածուի:

4. Գեղակ կապ (Nœud de Batelier). — Նաւաստիներ յաճախ կը գործածեն զայն. նաւը կայանի մը մօտ կեցնելու համար: Սքառուղները այս կապին պէտք կ'ունենան պարան մը պրկուած դիրքով ծառի մը կամ գերանի մը շուրջ հաստատելու առիթով:

5. Ձկնորս կայ (Nœud de Pêcheur). — Ձկնորսներու կողմէ մասնաւորապէս կը գործածուին իրենց կարթերուն պատրաստութեան համար :

6. Անխոփ կայ (Nœud à raccourcir). — Երկար պարան մը առանց կտրտելու՝ կարճեցնելու համար : Մասնաւորապէս վրաններու կազմութեան ատեն երկար ջուանները ամփոփ պահելու համար կը գործածուին :

Հետախուզական նշաններ . — Ասոնք միշտ կը դըրուին հետախուզում կատարուելիք ճամբաներուն աջ եզերքներուն վրայ եւ հետեւորդ սքառւղներուն կողմէ դիւրաւ տեսնուիլ եւ հասկցուելու պայմանաւ , (զօր օրինակ գիշեր ատեն փոխանակ հողին վրայ գիծեր քաշելու իբր նշան , պէտք է զայն ներկայացնել տեսանելի գոյնով եւ հողին վրայ ցցուած աւարկաներով . քար եւ այլն .)

Ա. Դժուած Սլաֆ մը ցոյց կ'ուտայ հետեւեղի ճամբան :

Բ. Ուղղակիին փառակիւնի մը կարճ կողմին վրայ աւելցուած Սլաֆ մը ցոյց կ'ուտայ թէ սլաքէն երկու երեք մէթր հեռուն նառակ մը թաղուած կամ պահուած է :

Գ. Պատկերին մէջ ցոյց տրուած գիտար կտրող գծերը ցոյց կուտան թէ ճամբան անանցանելի կամ անելի է :

Դ. Միջեղը կետով շրջանակ մը կը նշանակէ վերադարձ իր տեղը :

Ե. Շրջանակաձեւ պատկերը կը տեսնուի ջուրի մը քով որուն յետ քննութեան խմուելու յարմար ըլլալը հաստատուած է :

Զ. Երբ՝ շրջանակին վրայ , պատկերին մէջ ցոյց տրուած դիրքով կը գտնուի սլաք , կը նշանակէ թէ մօտը խմուելիք ջուր կայ :

Է. Սլաքը հակառակ ուղղութեամբ հաստատուած պարագային կը հասկցուի թէ հեռուն խմուելիք ջուր կայ :

Հետախուզող սքառւղը իր դրած նշաններուն քով պարտի ստորագրել , այսպէս նշանին տակը գծել իր խմբակը ներկայացնող կենդանիին պատկերը , աջ կողմը պատկանած մասնաճիւղին թիւը լատինական թուանշանով եւ ձախ կողմն ալ սովորական թուանշանով իր խմբակին մէջի իր սեփական թիւը . զօր օրինակ , երբ սլաք մը (տակը աղուէսի մը գլուխ) որուն աջ կողմը XII . եւ ձախին 5 . թուանշանները զրուած են , կը նշանակէ՝ հետեւելիք ճամբայ , ցոյց տրուած սքառւղներու տասներկուերորդ շրջանակին , Աղուէս խմբակին թիւ 5 սքառւղին կողմէ : Հետեւող սքառւղը նշանին տեղեկանալէ վերջ՝ զայն կ'աւրէ :

Խմբապետը պէտք է ճանչնայ այն տեղը՝ ուր կը տանի իր սքառւղները , ոչ միայն պէտք է գիտնայ թէ ուր կ'երթայ , այլ նաեւ պէտք է կարող ըլլայ ուշադրութիւնը հրաւիրելու խել մը բաներու վրայ : Նախ եւ առաջ աղէկ է ճամբան ուսումնասիրել՝ սպայակոյտի քարտէսի մը վրայ , կարելի է նոյնիսկ միասին շինել ուրուագիր մը՝ մանրամասնութիւնները նշանակելով , եւ յետոյ հակակշռել զայն գետին վրայ :

Չննելու կարողութիւնը միշտ վառ պէտք է պահել , քաղաքներու մէջ , փողոցներուն , վաճառատուն-

ներուն եւայլն անունները. գիւղերուն մէջ՝ եկեղեցին կամ ուրիշ շէնք մը որուն միջոցաւ կարելի է համբան գտնել. դաշտին մէջ, ագարակ մը, ցուցիչ ցից մը եւայլն, զննող ոգին մշակելու միջոցներ են : Այս կարողութիւնը մարգելու համար՝ յանկարծական կերպով պէտք է հարցնել սքառուղին : Մարդոց եւ անասուններու հետքերու զննութիւնն ալ պէտք է կատարուի :

Սքառուղը, կամ գոնէ պետերը, պարտին ունենալ վստահելի կողմնացոյց մը : Բաց աստի, պէտք է սորվեցնել Հրևսիսը գտնել Բեւեռային Աստղին՝ ինչպէս նաեւ Ժամացոյցի միջոցաւ : Ժամերը ցոյց տուող սլաքը արեւուն կողմը պէտք է ուղղել : Հարաւը կը գտնուի գրեթէ սլաքին եւ XII թուանշանին մէջտեղը :

Յիշել թէ արեւը, լուսինը, մոլորակները . արեւելքի կողմէն կ'ելլեն եւ արեւմտեան կողմէն մայր կը մտնեն : Ժամը ճին արեւը արեւելեան կողմն է, կէս օրին արեւը հարաւային կողմն է . երեկոյեան ժամը ճին Արեւը արեւմուտքի կողմն է : Էռանանորին եւ առաջին քառորդի միջոցին, լուսինին մահիկեղջիւրները արեւելեան կողմը դարձած կ'ըլլան (այն ատեն լուսինը իրիկունը տեսանելի է) : Երբ լուսինը կը պակսի, մահիկեղջիւրները դէպի արեւմուտք դարձած կ'ըլլան եւ լուսինը առտուն տեսանելի է :

Կարելոք է որ սքառուղը քարտէսը կարդալու վարժուի՝ մինչեւ որ ընտանեանայ բոլոր ցուցումներու հետ : Յետոյ քարտէսովը պէտք է դուրս ելնել եւ ցուցումները բաղդատել՝ նախ ծանօթ տեղ մը՝ ետքը, անծանօթ տեղերու մէջ պէտք է առաջնորդուիլ քարտէսէն :

Գաւազանները շատ օգտակար պիտի ըլլան՝ հաշիւներու համար : Այսպէս Ժայտի մը կամ շէնքի մը բարձրութիւնը չափելու համար կը բաւէ, եթէ արեւկայ, հարիւր վաթսուն սանթիմնոց գաւազանը ուղղածիք տնկել գետինը եւ չափել անոր ձգած շուքը . յետոյ չափել Ժայտին կամ շէնքին ձգած ստուերը եւ համեմատական կերպով հաշուել :

Սքառուղ մը պէտք է գիտնայ նաեւ թէ քանի քայլ պէտք է առնէ 100 մէթր տեղ կտրելու համար :

Մակերեւոյթները չափելու համար յաճախ ուղիղ անկիւնի մը պէտք կայ, կարելի է ուղիղ անկիւն մը կազմել 12 հաւասար երկայնութիւններու բաժնուած առասանի մը միջոցաւ : Երրորդ, եօթերորդ եւ տասներկուերորդ բաժանումներուն վրայ մէկ մէկ կապ պէտք է շինել : Այս կերպով ստացուած այս երեք երկայնութիւններով եռանկիւն մը կազմելու է, անկիւններէն մէկը ուղիղ է :

Գետնին վրայ ուղիղ գիծ մը ունենալու համար, գաւազանները այնպէս մը տնկելու է որ՝ առաջին գաւազանին ետեւը կեցողը միւս գաւազանները չի տեսնէ :

Մեծ հեռաւորութիւններէ իրարու հետ խօսակցելու համար՝ սքառուղները Մօրսի այբուբէնի նշանները կը գործածեն : Կարելի է նաեւ թեւերու նշաններով կամ դրօշով խօսակցելը :

Մխառնի գնացի բացատրութիւնը ընդունուած է գործածել այն գնացքին որ կը դորձադրուի որոշուած տեղ մը արագ հասնելու առիթով, եւ Հայ-սքառուղին-

բու համար նախընտրուածն է 20 քայլ վազք. եւ 20 քայլ կանոնաւոր գնացք յաջորդաբար՝ փոփոխակի կերպով:

Սքառուղը կը սորվի հանչնայ բնութիւնը՝ որուն ծոցին մէջ կ'ապրի: Անտառին ծառերը իրեն ընտանի կը դառնան, նոյնպէս խել մը ծաղիկներ: Կը դիտէ կարգ մը տունկերու մասնաւոր յատկութիւնները, զոր օրինակ՝ մագլցող տունկերէն մաս մը միշտ դէպի աջ կը դառնայ, ուրիշ մաս մը միշտ դէպի ձախ: Կան բոյսեր որ ուրիշ բոյսի մը վրայ կը բուսնին, կը ծակեն զայն եւ զանոնք կը յեն եւ այլն:

Խմբապետը պիտի նկարագրէ այն գլխաւոր անատունները որոնց պիտի հանդիպին սքառուղները եւ պիտի խօսի անոնց բարբերուն վրայ: Այդ անատուններէն պիտի բռնէ եւ ուսումնասիրել պիտի տայ զանոնք: Ի հարկին գիւղացիներու ծանօթութեանց դիմում պիտի ընէ: Խլուրդներու հողակոյտ մը, մրջիննոց մը պիտի ուսումնասիրէ: Մեղուաբոյժ մը իր փեթակները պիտի ցուցնէ, սքառուղը թռչունները պիտի հանչնայ նաեւ իրենց դայալիկէն եւ այլն:

Խմբապետը պիտի նկարագրէ տեղւոյն գլխաւոր գետիները եւ երկրաբանական հոխ երեւոյթներ ուսումնասիրել տալու առիթներ պիտի ունենայ:

Բանակումը (campement) սքառուղներուն ամենէն մեծ հատոյթներէն մէկն է: Սակայն բանակումը լուրջ բան մըն է, եւ դոյզն անհոգութիւն մը կրնայ ցաւալի հետեւանքներ ունենալ: Ուստի բանակումը վարողը պէտք է խմբապետը ըլլայ, պէտք է որ անանկ եղանակի մը մէջ տեղի ունենայ որ կարելի ըլլայ անվտանգ

քնանալ բաց օդի մէջ: Պէտք է հոգ տանիլ որ իւրաքանչիւր սքառուղ ունենայ նպատակոյարմար ներքին հագուստ, մաքրութեան եւ հաշի համար պէտք եղած առարկաները: Պէտք է ունենայ նաեւ ջուրի համար պէտք եղածը, լապտեր, կացին, սան, դոյլ, թիչուաններ, բժշկական գործիք, դեղեր եւ այլն:

Ճամբան պէտք է ղգուշանալ պատահական ջուրեր խմելէ: Կասկածելի ջուրերը եռացնելէ վերջ պէտք գործածել:

Գետնի վրայ քնանալու պարագային պէտք է գետնին եւ մարմինին մէջտեղը անթափանց բան մը դնել:

Սքառուղի մը վիրաւորուելու կամ հիւանդանաղու պարագային միւս սքառուղները պէտք է խնամեն զինքը: Մնաց որ սովորական կեանքի մէջ սքառուղ մը կրնայ առիթը ունենալ չոնէ մէկը խնամելու: Երկու սկզբունք կայ զոր պէտք չէ միտքէ հեռացնել. 1. Պաշարիւնաքիւն պահել. 2. Յիշել թէ սքառուղը թիշի օգնական մըն է յոյ եւ թէ բժիշկը պէտք է կանչուի՝ անմիջապէս որ վրդովիչ նշաններ երեւան գան:

Սքառուղը պէտք է զիտնայ որ վիրաւորեալը պառկած վիճակի մէջ պէտք է անմիջական խնամքները ընդունի եւ փոխադրուի: Սքառուղը պէտք է վիրաւորեալը խնամէ իբր թէ իր մօտաւոր ազգականը ըլլար:

Վերջը դարձանելու սկսելէ առաջ, պէտք է որ սքառուղը խնամով օճառէ ձեռքերը՝ եղունգները աղէկ մը մաքրելէ վերջ՝ վերքը պէտք է փափկօրէն մաքրէ եռացեալ ջուրով կամ հականեխական հեղուկով մը (զոր օրինակ մէկ լիդր ջուրի մէջ մէկ դգալ lysol): Թու-

նաւորուած վէրքերը (խայթուածք, խածուածք) պէտք է սեղմուին . յետոյ մէկ քանի կաթիլ հեղուկ անուշադրակով, կամ կարմրցած երկաթով պէտք է խարանուին :

Եթէ վիրաւորը մտած է, այն պարագային մէջ միայն տեղափոխել երբ բացարձակ պէտք կայ եւ երբեք ունէ բան չխմցնել . նախ պէտք է սթափեցնել հակած դիրք, գլուխը վար, զօրաւոր շփումներ՝ տաք եւ չոր լաթերով : Զօրաւոր հոտեր (անուշատրակ, ether, եւ այլն) շնչել տալ :

Ոտքի ուրիշ վրայ պաղ ջուրով բարձիկ (compresse) դնել եւ սրունքը թեթեւ մը վեր բարձրացուցած դիրքի մէջ հանգիստ պահել :

Ոսկորի խախտումի պարագային՝ վնասուած անդամը իր դիրքին մէջ անշարժ պահել, եւ պաղ ջուրի կամ սառի բարձիկ դնել :

Ոսկորը կոտրելու պարագային՝ անշարժացնել վնասուած անդամը եւ պատգարակով փոխադրել :

Զուրի մեջ խեղդուած մէկու մը համար պէտք չէ յոյսը կտրել ազատելէ՝ եթէ սիրտը տկար կերպով կը զարնէ տակաւին կամ եթէ թեթեւ սարսուռներ կը տեսնուին : Աջ կողմին վրայ պառկեցնել, գլուխը վար ծռել նակատին կողմէն բռնելով, կամաց մը իրարմէ հեռացնել կզակները՝ շուրին վազելը դիւրացնելու համար, եւ փորձել տալ արուեստական շնչառութիւն :

Տօքանաւորութիւն Ախտանիշներն են՝ ծարաւ, տկարութիւն, նուաղում, յաճախ սաստիկ տաքութիւն եւ

երեսի կարմրութիւն : Դարմանումի գործնական միջոցներն են . հանգիստ՝ շուքի մէջ, դէմքը, ձեռքերը, կուրծքը պաղ ջուրով լուալ, եթէ հիւանդը չէ մարած՝ պաղ ըմպելիք, ի հարկին՝ արուեստական շնչառութիւն :

Մտրեղիֆ . Ախտանիշներ՝ տփուկութիւն, պաղ բրբտինք, յաճախ փսխում, իյնալ եւ այլն : Զեռք առնուելիք միջոցներն են՝ հիւանդը պառկեցնել գլուխը շատ ցած, ճնշող հագուստները հանել, երբ հիւանդը սթափի, անանուխ կամ gouttes anodines տալ (8-10 կաթիլ) :

Թունաւորումի պարագային անպատճառ փսխեցնել, մատը կոկորդը խոթելով, փսխեցուցիչ դեղով (աղի ջուր, poudre dosée d'ipécacuaana) յետոյ լուծողական մը տալ (հինտ եաղի, լուծողական հանքային ջուրեր) :

Եթէ թունաւորումը թթուններ կուլ տալէ առաջ եկած է, պէտք է թոյնին ազդեցութիւնը կտրել կաթով, մէկ լիդր ջուրի մէծ 5-6 հաւկիթի ճերմկուցով, աճառաջուրով, կրաջուրով, կարագով, հանքային լուծողական ջուրերով, եւ այլն :

Սմբապետը միշտ ախորժելի պիտի ընէ իր ամէն տեսակ ծրագիրները, զորս առաջուց պիտի պատրաստէ : Իր դասերը եւ յարդորները պիտի համեմէ պատմութիւնով մը : Իր օրինակները պիտի քաղէ չայ եւ օտար նշանաւոր մարդոց կեանքէն, մանաւանդ իրենց գործերուն զաւակը եղող, իրենց ուժերովը առաջ գացած մարդոց կեանքէն :

Դաւանանքը պիտի ըլլայ վերին նպատակը : Խըմ-

բապետը անդադար պիտի անդրադառնայ դաւանան-
քին : Խմբապետը պէտք չէ մոռնայ թէ սքառւղները
պիտի արժեն ան՝ ինչ որ կ'արժէ ինքը : Որքան արժա-
նապատուութեան խնդիր մը , նոյնքան ազգասիրու-
թեան պարտականութիւն մը պիտի ընէ ինքզինքին
համար անկեղծօրէն եւ խղճմտօրէն ու անձնուէր կեր-
պով ի գործ դնել իր պաշտօնը : Սքառւղները պիտի
սիրեն ու յարգեն զինքը , անոնք պիտի ազնուանան
ամէն օր , եւ աս պիտի ըլլայ իրեն համար անփոխա-
րինելի երջանկութիւն մը :

Վհատութեան եւ յոգնութեան վայրկեաններուն ,
խմբապետը թող յիշէ թէ ամէնէն թանկագին ծառա-
յութիւնը կը մատուցանէ իր Քայրենիքին՝ անոր նուի-
րելով անձնուէր եւ արի Հայեր , որոնք պիտի ըլլան
պատուական քաղաքացիներ :

Հետեւողութեամբ անգլիական , ֆրանսական եւ
գուիցերիական սփառուներու կանոնագրերուն եւ բա-
կաբեւոյն պատճառեցնելով զանոնք մեր ցեղին յասկու-
թիւններուն եւ պահանջներուն՝ ներկայ կանոնագիրը
խմբագրուած է , Հայ Մարմնակրթական ընդհանուր Միու-
թեան կեդրոնական վարչորթեան կողմէ , որ Հայ Սփա-
ռուներու կազմութեան նախաձեռնութիւնն ու իրաւա-
սութիւնն ունեցող միակ պատճառական մարմինն է հաս-
տատուած Ազգ. վերին վարչութեան :



9006

Հ. Մ. Ը. Մ. Հիմնուած 1918ին եւ հաստատուած
Ա.գգ. Կեդր. Վարչութեան համար 58
եւ 13 Դեկտ. 918 քուակիան
Պատերազրով:

Կեդրոնական Վարչութեան հոսոց՝

Մեյսաննրք, Վիթալ Խան

Կ. ՊՕԼԻՍ

Adresse :

UNION ARMÉNIENNE DE CULTURE PHYSIQUE

ET DE SCOUTISME

BUREAU CENTRAL

Meïdandjik, Vital' Han

CONSTANTINOPLE

U. A. C. P. ET DE SCOUTISME

26, Khorassandjuyi Han, 26

SIRKÉTI-STAMBOUL, CONSTANTINOPLE